ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

10 հունվարի 2025 թվականի N ՑԲ-001-01/25

ք. Երևան

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ 485,000 ՀԱՏ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ԲՈՐՍԱՅԻ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ (A) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ԵՎ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Թողարկող) 2024 թվականի նոյեմբերի 12-ի հայտը, դեկտեմբերի 13-ի և 30-ի հայտի լրացումները 4,850,000,000 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, լրացուցիչ տեղաբաշխված 485,000 հատ սովորական անվանական բաժնետոմսերը ցուցակելու և բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ,

Հիմք ընդունելով Ընկերության 2024թ. դեկտեմբերի 13-ի գրությունն այն մասին, որ Ընկերության Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 2024թ. նոյեմբերի 22-ի թիվ 25 արձանագրության թիվ 25-2 որոշմամբ իրականացվել է Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացում չբաշխված շահույթի հաշվին, որի արդյունքում Ընկերության սովորական, անվանական բաժնետոմսերի անվանական արժեքը 10,000 ՀՀ դրամից դարձել է 15,000 ՀՀ դրամ,

Հիմք ընդունելով «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 09-ի եզրակացությունը,

Հաշվի առնելով, որ ներկայացված բաժնետոմսերը և Թողարկողը բավարարում են Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» (այսուհետև՝ Կանոններ) 9-րդ գլխով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Օպերատորի Կանոնների 16-րդ գլխի 72-րդ և 80-րդ կետերը, և, ղեկավարվելով 15-րդ գլխի 68-րդ կետի 1-ին ենթակետով, ինչպես նաև Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.58.-րդ կետի 9.58.5. ենթակետով՝ Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. 2025 թվականի հունվարի 15-ից ցուցակել և բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակում ընդգրկել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի 7,275,000,000 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, 15,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, լրացուցիչ տեղաբաշխված 485,000 հատ սովորական բաժնետոմսերը, որոնց «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ կողմից շնորհվել է **AMACBAS10ER7** տարբերակիչ ծածկագիրը, իսկ Օպերատորի կողմից՝ **ACBA** հապավումը, միաժամանակ թույլատրել դրանցով հասցեական առևտրի իրականացումը և ռեպո գործարքների կնքումը:
2. Օպերատորի բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակում Թողարկողի ցուցակված 5,500,000 հատ բաժնետոմսերի անվանական արժեքը սահմանել 15,000 ՀՀ դրամ՝ պայմանավորված «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ հասարակ անվանական բաժնետոմսերի անվանական արժեքի փոփոխությամբ:
3. Սահմանել, որ 2025 թվականի հունվարի 15-ից բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակում ցուցակված են համարվում Ընկերության ընդհանուր քանակով 5,985,000 հատ սովորական բաժնետոմսեր:

4. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:

5. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**